քսան քայլ էր արել սկսեց անձրեւել: Նայում եմ երկինքը՝ ամպ չկայ, ծանրաչափը ասես՝ միշտ անփոփոխ, իսկ անձրեւը գալիս ա ու գալիս ա...

Պայտառակուեցինք: Կարո՞ղ էք երեւակայել կղերականների յաղթութիւնը: Գաւառի չորս կողմից գիւղացիները եկան, մանաւանդ թուրք գիւղացիները, թէ ի սէր Աստուծոյ Աւետարանը մեզ էլ բերէք: Ու Աւետարանը չրջեց ամբողջ գաւառը: Հարիւրներով ոչխար նուիրեցին, եկեղեցին նուէրներ տուին, փող, խալի: Ինչպէ՞ս ասեմ...

— Էլ ոչ մի բան էլ մի ասէք:

— Հա՛, հէնց ես էլ դա եմ ասում...

* * *

Ընկեր Լուկաչինը, չնայած որ առաւօտ լոյսին պիտի մեկնի դէպի Զանգեզուր, նստել է Սեւանայ լիճի քարտէսի առաջ եւ մեր վաղուան պտոյտի տեղերն է նշանակում

Պորհուրդների նախագահը ինչ որ կովերի մասին է խօսում: Գիւղացիները տաւար են պահանջում: Ուրիշ կարեւոր մի գործ: Ծովափի թուրք գիւղերից մէկում տաճկահայ գաղթականներ են տեղաւորել, թուրքերը բողոքում են: Հայ չեն ուզում, իսկ եթէ անպատճառ իշխանութիւնը ուզում է հայ պարտադրել, թո՛ղ գոնէ տեղացի հայեր դրկի: Պիտի գնան կարգադրեն:

Ծուխը քուլա-քուլա բարձրանում է: Զի հասկացում՝ որտեղի՞ց է փչում ցուրտը:

Հայաստանի բոլոր տունները լերան գագաթի նման անպաշտպան են: Հովը կոտրտուղ ոսկորների վրայ սառը ճպռտ է քսում: Վենետիկեան վերարկուս կպել է մարմնիս եւ սարսռում է:

Բո՛ւրդ, բո՛ւրդ:

Պառկել ենք չոր գետնի վրայ: «Ընկերներ, դէ այս գիշեր մի կերպ եօլա գնացէք»...

Եօլա ենք գնում:

Մօտս պառկած ամերիկահայ հրապարակագիրը մէջքը կպցնում է մէջքիս եւ քթի ծակերով անուշօրէն սուլում է: Կծկուել պառկել եմ: Կարծես մարմնիս ամէն կողմը դամ են դամում: Անհանգիստ տրորւում եմ: Կռնակիս վրայ նստած ձիւնը թաւի եմ տալիս եւ, ջղայնացած, ուժգին հարուածով հարեւանս մի կողմ եմ նետում: «Եղբայր, հանգի՛ստ, պիտի թողնե՞ս քնենք»: Հարեւանս բողոքում է եւ ամէնքը գլուխները վեր են բարձրացնում:

«Զարեան քնի՛ր»:

Հեշտ է ասել քնիր: Դրան տակից լեռը գալիս պլլւում է ոտքերիս: Բեւեռը սառոյցէ իր ականջը կպցնում է խոմփոցներին եւ բարկացած ման գալիս:

Մղձաւանջային մի գիշեր:

Բարեկամս՝ մալարիան՝ դեղին քայլերով մտել է ներս, գրկել է ամբողջ իմ մարմինս եւ ուժգին ձեռքերով թափահարում է ինձ:

Դէս դէն եմ դառնում, գլորւում կծկըւում: Անասելի մի մելամաղձութիւն սրածայր իր ճիրաններով սրտիս երակներն է քաշում: Բոլոր դաղափարներս գլորուել են վիհ: Ուղեղս սառել է:

Բո՛ւրդ, բո՛ւրդ: Աչքերիս առջեւ դանդուրաւոր ոչխարների հօտ է անցնում: Եպիսկոպոսը բարձրացրել է Սեւանայ Աւետարանը եւ բամբ ձայնով երգում է: Ծանրաչափի վրայ սլաքը խենթացած պտոյտ է գալիս, ջղայնանում, գլուխը դէս դէն շարժում: Օ, հը-բա՛շք...ընկերներ, ձիւն է գալիս: Կարլ Մարքսը, երկայն մօրուքով եւ սեւ իր բէդիճգոտը ուսերին, մէկ ոտքի վրայ ցատկռտում է, օդի մէջ ձիւնի ծուէններ է որսում եւ Աւետարանի առջեւ պար է գալիս:

Ողնաշարս կոտրտւում է:

Ընկել եմ լայնածաւալ մի ստեպ: Երեք մետր ձիւն եւ մրրիկ: Ձիւնը փոշիացած բարձրանում է, պտոյտ գալիս եւ թանձր ամպի նման ծածկում է ամբողջ աշխարհը:

Լենինը առանց վերարկուի, ձեռքերը գրպանները դրած, վիզը ուսերի մէջ առած, արագ քայլում է: Ես հասկանում եմ, որ նա գնում է Հայաստան Մաշթոցը տեսնելու:

Մաշթոցը, իր խաւար պատուռումի մէջ ծալապատիկ նստած, վառել է իր աչքերի սեւ ճրագը եւ ժայռի կատարից նայում է ձիւնին եւ մրրիկին: Ու լսում եմ՝ ինչպէ՞ս շառաչում է լիճը, աղմկալից կոհակները փչուր են գալիս, ձիւնէ ամպերը պատռտած սաւանների նման տատանւում են օդի մէջ, լեռների գագաթները շարժւում են, ափերը ձիւնապտոյտի հետ բարձրանում են վեր, իրենց գլուխը եր-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան